ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 01-2023-2024

2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-ԻՆ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԹԻՎ 01/2023 ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 04 մարտի, 2024 թվական

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2023 թվականի մարտի 13-ին Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Չարչյանի նկատմամբ հարուցված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ թիվ 01/2023 վարույթում առկա նյութերը.

ՊԱՐԶԵՑ

I. Նախապատմություն

1. 2023 թվականի մարտի 13-ին Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, նույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և ուսումնասիրելով Հանձնաժողովի կողմից 2022 թվականի նոյեմբերի 30-ին հարուցված թիվ 08/2022 վարույթի իրականացման շրջանակներում ձեռք բերված նյութերը, կայացրել է թիվ 01/2023 որոշումը՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին:

2. Արմեն Գերասիմի Չարչյանը Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը ստանձնել է 2021 թվականի օգոստոսի 2-ին:

3. Հանձնաժողովի կողմից նախորդիվ իրականացված անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ մեկ այլ՝ թիվ 08/2022 վարույթի իրականացման շրջանակներում Պետական եկամուտների կոմիտեի 2023 թվականի հունվարի 24-ի թիվ 01/71-6/3967-2023 գրությամբ տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Արմեն Չարչյանը 2021 թվականի օգոստոսից մինչև 2022 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում ստացել է աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանից: Նշվածի ուսումնասիրությամբ Հանձնաժողովի կողմից «Էկենգ» ՓԲԸ փոխգործելիության հարթակի միջոցով Պետական եկամուտների կոմիտեի առցանց հարթակից ձեռք են բերվել տվյալներ առ այն, որ Արմեն Չարչյանը 1992 թվականի մարտի 21-ից Համալսարանում զբաղեցնում է ամբիոնի վարիչի պաշտոն: Նույն գրությամբ տրամադրված մեկ այլ տեղեկատվության համաձայն՝ Արմեն Չարչյանը 2022 թվականի մայիսից մինչև նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ստացել է աշխատանքային վարձատրություն քաղաքացիաիրավական պայմանագրով «Իզմիրլյան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից:

4. Հարուցված վարույթում քննարկվող հարցերի ուսումնասիրման ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ Հանձնաժողովը 2023 թվականի մարտի 17-ին Ե-01/617-2023 գրությամբ պարզաբանումներ է հայցել Արմեն Գերասիմի Չարչյանից, 2023 թվականի ապրիլի 20-ին Ե-01/946-2023 գրությամբ հարցում է կատարել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան, իսկ 2023 թվականի մայիսի 25-ին Ե-01/1236 գրությամբ՝ «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին:

5. Վարույթի շրջանակներում Հանձնաժողովի կողմից իրականացվել է գործում քննարկվող հանգամանքների վերաբերյալ ուսումնասիրություն, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի պաշտոնական կայքում տեղ են գտել հրապարակումներ Արմեն Չարչյանի կողմից վիրահատություններ կատարելու վերաբերյալ: Դրանցից մեկը հրապարակվել է 2023 թվականի մարտի 2-ին՝ «Վիրահատությունը կատարել է պրոֆեսոր Արմեն Չարչյանը» վերնագրով, իսկ մյուս 2

տեսանյութերը հրապարակվել են 2022 թվականի հոկտեմբերի 10-ին և 2022 թվականի հունիսի 8-ին նույնաբովանդակ վերնագրերով:

6. Հանձնաժողովի կողմից 2023 թվականի մայիսի 25-ին Ե-01/1236-2023 գրությամբ հարցում է կատարվել «Իզմիրլյան» բժշկական կենտրոնին՝ պահանջելով տրամադրել տեղեկատվություն վարույթում քննարկվող մի շարք հարցերի առնչությամբ:

7. 2023 թվականի հունիսի 6-ին «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից ներկայացվել է թիվ 186/23 պատասխան գրություն, որի համաձայն՝ Արմեն Չարչյանը Պայմանագրի հիման վրա կատարել է վնասվածքաբանության և օրթոպեդիայի ուսումնական, կոնքազդրային հոդի էնդոպրոթեզավորման մեթոդական ձեռնարկների կազմման աշխատանքներ, «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում Արմեն Չարչյանի կողմից գիտական վերլուծության են ենթարկվել բաժանմունքների գործունեությունը, ուսումնասիրվել է դրանց բուժական արդյունավետությունը, ժամանակակից գիտական մեթոդների մեթոդոլոգիաների կիրառումը բուժական գործունեության մեջ, արվել են համապատասխան եզրահանգումներ և յուրաքանչյուր բաժանմունքի համար կազմվել են բուժման որակի և հիվանդների անվտանգության բարձրացմանն ուղղությամբ համապատասխան ճանապարհային քարտեզներ:

8. 2023 թվականի հունիսի 7-ին Հանձնաժողովն ընդունել է «Վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» 01-1/2023 որոշումը, որի համաձայն՝ վարույթի ժամկետը երկարաձգվել է 30 օրով՝ մինչև 2023 թվականի հուլիսի 7-ը: Որոշման համար հիմք է հանդիսացել Առողջապահության նախարարություն ուղղված հարցման անհրաժեշտությունը, որով պայմանավորված՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է եղել ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը:

9. 2023 թվականի հունիսի 13-ին Հանձնաժողովի կողմից թիվ Ե-01/1376-2023 գրությամբ փոխօգնության կարգով հարցում է իրականացվել Առողջապահության նախարարին՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե արդյոք «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից թիվ 186/23 գրությամբ ներկայացված՝ Արմեն Չարչյանի կողմից «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում կատարված աշխատանքները ենթակա են առանձնահատուկ

կարգավորման և պարտադիր փաստաթղթավորման՝ միաժամանակ խնդրելով տրամադրել անհրաժեշտ հիմքերը (նյութեր՝ չափորոշիչներ, ձևաթղթեր և այլ վերաբերելի նյութեր):

10. Նշված հարցմանն ի պատասխան 2023 թվականի հունիսի 23-ին Հանձնաժողով մուտքագրված Առողջապահության նախարարի թիվ ԱԱ/19/14475-2023 գրությամբ պատասխան է ներկայացվել առ այն, որ «Իզմիրլյան» բժշկական կենտրոնում Արմեն Չարչյանի կողմից իրականացված գործունեության արդյունքների, այդ թվում՝ ճանապարհային քարտեզների վերաբերյալ Առողջապահության նախարարությունը տեղեկատվության չի տիրապետում: Միաժամանակ, գրությամբ հայտնել են, որ Արմեն Չարչյանի կողմից մշակվել են մեթոդական ձեռնարկներ, որոնք հաստատվել են Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական Բժշկական Համալսարանի կողմից, օրինակ՝ Սրունքի կոնդիլի կոտրվածքների վիրաբուժական բուժում՝ տեղեկացնելով նաև, որ Առողջապահության նախարարի կողմից հաստատված են կլինիկական ուղեցույցներ, որոնք տեղադրված են Առողջապահության նախարարության պաշտոնական կայքի համապատասխան բաժնում:

11. 2023 թվականի հունիսի 13-ին թիվ Ե-01/1375-2023 գրությամբ Արմեն Չարչյանին Հանձնաժողովի կողմից ներկայացվել է գրություն՝ առաջարկելով ներկայացնել պարզաբանում «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի պաշտոնական կայքում և այլ հրապարակումներում տեղ գտած՝ իր կողմից վիրահատություններ կատարելու տեղեկությունների վերաբերյալ: Նշված գրությանը Արմեն Չարչյանի կողմից պատասխան չի ներկայացվել:

12. Հանձնաժողովի կողմից 2023 թվականի հունիսի 9-ի Ե-01/1341-2023 գրությամբ «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ին հարցում է ուղարկվել՝ առաջարկելով ներկայացնել Արմեն Չարչյանի կողմից 2021 թվականի օգոստոսի 2-ից մինչև 2023 թվականի հունիսի 8-ը կատարված վիրահատությունների քանակը, ժամանակացույցը, բնույթը և պատմությունները (վիրահատությունների նկարագրերը, այդ թվում՝ Առողջապահության նախարարի 2014 թվականի փետրվարի 14-ի թիվ N 02-Ն հրամանով հաստատված Մեծահասակի հիվանդության պատմագրերը՝ պացիենտի անձնական տվյալները փակված վիճակում):

13. Ի պատասխան նշված գրության՝ 2023 թվականի հունիսի 20-ին Մ-2682-2023 գրությամբ Հանձնաժողով է մուտքագրվել «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի N

202/23 գրությունը (այսուհետ՝ նաև ՓԲԸ-ի գրություն), որի համաձայն՝ «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն հանդիսանում է Բժշկական համալսարանի կլինիկական բազան, իսկ Արմեն Չարչյանը «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ում իրագործում է Բժշկական համալսարանի 5-րդ կուրսի ուսանողների և 1-3-րդ տարվա կլինիկական օրդինատորների թեորետիկ և կիրառական ուսուցում, Տվյալ ուսուցման շրջանակներում Արմեն Չարչյանը մասնակցում է որոշ վիրահատությունների՝ որպես վնասվածքաբանության օրթոպեդիայի ամբիոնի վարիչ, և պրակտիկայում բացատրում է և ցույց է տալիս կլինիկական օրդինատորներին և երիտասարդ բժիշկներին, թե ինչպես պետք է կատարել վիրահատության այս կամ այն փուլը:

ՓԲԸ-ի գրության համաձայն՝ Արմեն Չարչյանը «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ում Հանձնաժողովի կողմից նշված ժամանակահատվածում երբեք ամբողջական վիրահատություն չի կատարել և ուսումնական կիրառական գործունեության համար «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ից որևէ դրամ աշխատավարձ չի ստացել և նրա մասնակցությունը վիրահատություններին, որպես վնասվածքաբանության և օրթոպեդիայի ամբիոնի վարիչ, ֆիքսված է պատմագրերում հետևյալ կերպ՝ «Հիվանդը վիրահատվել է պրոֆ. Ա. Գ. Չարչյանի գիտական մանկավարժական ղեկավարությամբ»:

Ըստ ՓԲԸ-ի գրության՝ պատգամավորի մանդատը ստանձնելուց հետո առ այսօր Արմեն Չարչյանը որևէ բուժական գործունեություն չի ծավալել և հետևապես, որևէ աշխատավարձ չի ստացել: Նրա մասնակցությունը բուժական գործընթացներին եղել է զուտ Բժշկական համալսարանի ամբիոնի վարիչի գործառույթների շրջանակներում և կրել է ուսումնական, մանկավարժական բնույթ, ինչի համար վերջինս ստացել է Բժշկական համալսարանի ամբիոնի վարիչի աշխատավարձ:

14. ՓԲԸ-ի գրությանը կից ներկայացվել են նաև Արմեն Չարչյանի և «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի միջև կնքված թվով 2 պայմանագրերը՝ ծառայությունների մատուցման մասին, որտեղ պայմանագրի առարկան կազմում է Արմեն Չարչյանի կողմից գիտական աշխատանքի կատարումը:

15. ՓԲԸ-ի գրությանը կից ներկայացվել են նաև Առողջապահության նախարարի 2014 թվականի փետրվարի 14-ի թիվ N 02-Ն հրամանով հաստատված Մեծահասակի հիվանդության թվով 71 պատմագրերը՝ պացիենտի անձնական տվյալները փակված վիճակում:

16. ՓԲԸ-ի գրությամբ «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ն հայտնել է, որ Արմեն Չարչյանի մասնակցությամբ համացանցում հրապարակված տեսանյութերի վերնագրերը, որտեղ նշված է եղել որ «Վիրահատությունը կատարել է պրոֆ. Ա. Գ. Չարչյանը», եղել է տեխնիկական վրիպակ «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի գործընկեր կազմակերպության կողմից, որոնք լիարժեք չեն տիրապետել իրավիճակին: Նշված վրիպակները ուղղվել են, և ներկայում տեսանյութերը ձևակերպված են հետևյալ կերպ. «Վիրահատությունը կատարվել է պրոֆեսիոնալ մասնագիտական խմբի կողմից, պրոֆեսոր, «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի գիտական համակարգող՝ Արմեն Չարչյանի գիտաուսումնական ղեկավարությամբ»:

17. ՓԲԸ-ի գրությամբ նշված հանգամանքների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից 2023 թվականի հունիսի 22-ին թիվ 01/1483-2023 գրությամբ հարցում է ուղարկվել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորին, խնդրելով հայտնել՝

- Արդյո՞ք Բժշկական համալսարանում առկա է գիտամանկավարժական գործունեության պլան:
- Արդյո՞ք գիտամանկավարժական գործունեության շրջանակներում պլանավորված է նաև Արմեն Չարչյանի ղեկավարությամբ «Իզմիրլյան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում կատարվող վիրահատությունների պլանավորված քանակը, ժամանակացույցը և այլն:
- Ե՞րբ և ի՞նչ հիմունքներով է իրականացվում «Իզմիրլյան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում կատարվող վիրահատություններին Արմեն Չարչյանի մասնակցությունը՝ որպես Բժշկական համալսարանի ամբիոնի վարիչ:
- Կա՞ն արդյոք սահմանված վիրահատությունների կոնկրետ տեսակներ, որոնց կապակցությամբ Արմեն Չարչյանի կողմից իրականացվում է կլինիկական օրդինատորների թեորետիկ և կիրառական ուսուցումը:

18. Ի պատասխան նշված գրության՝ 2023 թվականի հունիսի 28-ին Հանձնաժողով է մուտքագրվել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորի թիվ 23/699 գրությունը, որով հայտնվել է, որ համալսարանի ամբիոնի վարիչը համալսարանի տարածքում կարող է զբաղվել բժշկական մասնագիտական գործունեությամբ, եթե համատեղության կարգով համալսարանում զբաղեցնում է նաև «բժշկի» պաշտոնը, իսկ Արմեն Չարչյանը ամբիոնի վարիչի պաշտոնից բացի,

համալսարանում համատեղությամբ այլ պաշտոն չի զբաղեցնում և համալսարանում բժշկական մասնագիտական գործունեություն չի իրականացնում:

Վկայակոչելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական գործունեության մասին» և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքների համապատասխան դրույթները, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ռեկտորը նշել է, որ ամբիոնի վարիչի մասնագիտական գործունեությունը և բուժաշխատողի մասնագիտական գործունեությունը կարգավորվում է տարբեր իրավական նորմերով, և **ամբիոնի վարիչի պրոֆեսորադասախոսական գործունեությունը չի նախատեսում և չի ենթադրում վիրահատությամբ կամ բժշկական մասնագիտական գործունեության որևէ այլ տեսակով զբաղվելու իրավասություն:**

Համալսարանի ամբիոնի վարիչը և դասախոսները՝ սովորողներին, կլինիկական օրդինատորներին դասավանդում են տվյալ առարկայական ծրագրերին համապատասխան, որը կարող է ներառել տեսական նյութերի դասավանդում և տեսական գիտելիքների գործնական կիրառման մասին հմտությունների փոխանցում:

Համալսարանի ամբիոնի վարիչի կամ դասախոսի կողմից տեսական գիտելիքների գործնական կիրառման մասին հմտությունների փոխանցումն բժշկական մասնագիտական գործունեության շրջանակում իրականացվում է այն դեպքում, երբ վերջիններս՝ համատեղությամբ, ՀՀ աշխատանքային օրենսգրքին և այլ օրենքների պահանջների պահպանմամբ, սահմանված կարգով աշխատում են որպես «բժիշկ» բուժհաստատությունում, որը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Լիցենզավորման մասին» օրենքների և այլ օրենսդրական ակտերի հիման վրա լիցենզավորված է:

19. Հանձնաժողովն ուսումնասիրելով ՓԲԸ-ի գրությամբ ներկայացված մեծահասակի հիվանդության պատմագրերը, պարզել է, որ դրանցում առկա է «Վիրահատության նկարագրություն» վերտառությամբ բաժին, որտեղ ի թիվս այլ տեղեկությունների, նշված է նաև «Հիվանդը վիրահատվել է Ա. Գ. Չարչյանի գիտական և մանկավարժական ղեկավարությամբ» նախադասությունը:

Մասնավորապես, ուսումնասիրելով ՓԲԸ-ի գրությամբ ներկայացված պատմագրերի բովանդակային մասերը՝ պարզվել է, որ 4 պատմագրերի (պատմագրերի հերթական համարներ՝ 3004, 2436, 2237, 2579) «Վիրահատություններ, անզգայացման եղանակներ

և հետվիրահատական բարդություններ» բաժնում, որտեղ, ըստ ձևաչափի, նշվում է վիրահատող բժշկի անուն-ազգանունը և ստորագրությունը, ուղղիչ գրիչով (շտրիխով) փակվել է վիրահատող բժշկի սկզբնապես նշված անուն-ազգանունը (առերևույթ «Չարչյան» ազգանունը) և ավելացվել է այլ անուն-ազգանուն, ինչից ողջամտորեն ենթադրվում է, որ վիրահատող բժշկի տվյալները փոփոխված տարբերակով են ներկայացվել Հանձնաժողովին:

Արդյունքում, վարույթի շրջանակներում ձեռք բերված՝ վերը թվարկված բժշկական փաստաթղթերի ուսումնասիրմամբ Հանձնաժողովի մոտ ձևավորվել է ողջամիտ կասկած առ այն, որ Հանձնաժողովին «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի N 202/23 գրությամբ ներկայացված՝ մեծահասակի հիվանդության պատմագրերում ենթադրյալ փոփոխությունները կատարվել են՝ նպատակ ունենալով չեզոքացնել **անհամատեղելիության պահանջների հնարավոր խախտումները, որպիսի հանգամանքն էական նշանակություն ունի Հանձնաժողովի համար անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով հարուցված վարույթի շրջանակներում վերջնական եզրակացության հանգելու համար**:

20. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա 2023 թվականի հունիսի 22-ին 01/2023 վարույթը կասեցվել է և 2023 թվականի հունիսի 26-ին թիվ Ե-01/1498-2023 գրությամբ վարույթի նյութերն ուղարկվել են Գլխավոր դատախազություն՝ Հանձնաժողովի կողմից արարքում առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակելու հետևության գալով:

21. 2024 թվականի փետրվարի 26-ին Հանձնաժողով է մուտքագրվել Գլխավոր դատախազի թիվ 26/189գ-24 գրությունը, որով ներկայացվել է քրեական վարույթը կարճելու մասին 2023 թվականի դեկտեմբերի 23-ի քննիչի որոշումը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ հանցանքի բացակայության հիմքով՝ հաստատված Արաբկիր և Քանաքեռ վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի կողմից:

22. 2024 թվականի մարտի 4-ին հրավիրված Հանձնաժողովի նիստով որոշվել է վերսկսել թիվ 01/2023 կասեցված վարույթը՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված կարգով:

23. Ազգային ժողովի նախագահի 2023 թվականի հոկտեմբերի 30-ի N 20 արձանագրության համաձայն՝ Արմեն Չարչյանի՝ պատգամավորի լիազորությունները

համարվել են դադարած՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված հիմքով՝ Պատգամավորի լիազորությունները դադարում են, եթե՝ նա տվել է հրաժարական:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Արմեն Չարչյանի կողմից վարույթի իրականացման ընթացքում Հանձնաժողովին ներկայացված պարզաբանումների համաձայն՝ իր և Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի միջև կնքվել է աշխատանքային պայմանագիր, որով ինքն ընդունվել է աշխատանքի որպես ամբիոնի վարիչ, որը հանդիսանում է գիտամանկավարժական աշխատանք, հավասարեցված է դասախոսի կարգավիճակին և ունի դասախոսների համար սահմանված բոլոր իրավունքները և պարտականությունները, ուստի ինքը իրականացրել է գիտամանկավարժական աշխատանք, որը ՀՀ Սահմանադրության 95-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանում է պատգամավորի պաշտոնի հետ համատեղելի գործունեություն:

«Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կանոնադրության 2.2 կետի 6-րդ ենթակետի համաձայն՝ ընկերությունն իրավունք ունի լրացուցիչ իրականացնելու գիտական աշխատանքներ և գործունեության ծրագրեր: Իր և «Իզմիրլյան» բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության միջև կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի համաձայն՝ ինքը պարտավորվել է «Իզմիրլյան բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության համար կատարել գիտական աշխատանք՝ պայմանագրի 2.6-րդ ենթակետի համաձայն, որտեղ թվարկված են գիտական աշխատանքներին առնչվող գործառույթները: Նշվածից հետևում է, որ 2022 թվականի մայիսից մինչև նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում «Իզմիրլյան» բժշկական կենտրոն ՓԲԸ-ից ստացած վարձատրությունն առնչվում է իր կողմից կատարված գիտական աշխատանքին:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

1. Արմեն Գերասիմի Չարչյանը Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը ստանձնել է 2021 թվականի օգոստոսի 2-ին:

2. Արմեն Չարչյանը 1992 թվականի մարտի 21-ից Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում զբաղեցնում է ամբիոնի վարիչի պաշտոն:

3. Արմեն Չարչյանը 2022 թվականի մայիսից մինչև նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում ստացել է աշխատանքային վարձատրություն քաղաքացիաիրավական պայմանագրով «Իզմիրլյան բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից:

4. Ազգային ժողովի նախագահի 2023 թվականի հոկտեմբերի 30-ի N 20 արձանագրության համաձայն՝ Արմեն Չարչյանի՝ պատգամավորի լիազորությունները համարվել են դադարած:

IV. Անհամատեղելիության պահանջին առաջադրվող օրենսդրական կարգավորումներ, կիրառելի իրավական հիմքերը.

Սահմանադրության 95-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

«Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Սահմանադրության 95-րդ հոդվածին համապատասխան՝ պատգամավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

2. Պատգամավորական մանդատն ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, պատգամավորը պարտավոր է՝ (...) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, բացառությամբ գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանքի:»:

Նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված է նաև, որ «Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի իմաստով՝ ձեռնարկատիրական գործունեություն, ինչպես նաև գիտական, կրթական կամ ստեղծագործական աշխատանք է համարվում «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված համապատասխան գործունեությունը կամ աշխատանքը:

«Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: (...)

Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային: Նույն հոդվածի համաձայն՝ պետական պաշտոնները դասակարգվում են տեսակների՝ քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական:

Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնը հանդիսանում է պետական քաղաքական պաշտոն:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ի թիվս այլ դեպքերի, Հանձնաժողովը կարող է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների և իրավիճակային շահերի բախման վերաբերյալ վարույթներ հարուցել Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ հայտարարագրերը վերլուծելիս կամ օրենքով նախատեսված վարույթ իրականացնելիս առերևույթ խախտումներ կամ դեպքեր հայտնաբերելու դեպքում:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ պատգամավորի լիազորությունները դադարում են, եթե նա տվել է հրաժարական:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քրեական վարույթ չնախաձեռնելու մասին տեղեկանալու, քրեական վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշումն ստանալու պահից Հանձնաժողովը հնգօրյա ժամկետում վերսկսում է կասեցված վարույթը (...):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի համաձայն՝ **վարչական մարմնի նախաձեռնությամբ**

հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

V. Հանձնաժողովի պարտճառաբանություններն ու եզրահանգումը

Վերոնշյալ սահմանադրական դրույթների և օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ պատգամավորի՝ պետական քաղաքական պաշտոնը հանդիսանում է հանրային պաշտոն, որի նկատմամբ կիրառելի են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անհամատեղելիության պահանջները:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ ի թիվս այլ սահմանափակումների, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք (բացառությամբ համայնքի ավագանու անդամների) և հանրային ծառայողները չեն կարող կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

Վարույթի իրականացման ընթացքում ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Արմեն Զարչյանի՝ պատգամավորի լիազորությունները դադարեցվել են 2023 թվականի հոկտեմբերի 30-ին՝ իր կողմից հրաժարական տալու հիմքով: Այսինքն, Արմեն Զարչյանը 2023 թվականի հոկտեմբերի 30-ից դադարել է հանրային պաշտոն զբաղեցնող անձ հանդիսանալուց, ուստիև «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված, հանրային պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ սահմանափակումների սուբյեկտ հանդիսանալուց: Այլ կերպ ասած՝ 2023 թվականի հոկտեմբերի 30-ից սկսած (դեռևս սույն վարույթի ընթացիկ փուլում գտնվելու ժամանակահատվածում) Արմեն Զարչյանի նկատմամբ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի դրույթների գործողությունը չի տարածվում:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի վերլուծությունից բխում է, որ այն դեպքերում, երբ տեղի է ունեցել իրավիճակի փոփոխություն, որը կապված չէ օրենքի կամ իրավական այլ ակտերի պահանջների խախտման կամ դրանց կանխման հետ, կամ որևէ այլ օրենքով նախատեսված հիմքի առկայության պարագայում վարչական մարմնի նախաձեռնությամբ

հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Տվյալ դեպքում սույն վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա՝ օրենքով նախատեսված մեկ այլ վարույթ իրականացնելիս առերևույթ խախտում հայտնաբերելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի» հիմքով վարույթի կարճման հիմքերի կիրառելիության հարցը գնահատելիս՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավակարգավորումներին.

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավանորմի համաձայն՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարութը պետք է եզրափակվի Հանձնաժողովի կողմից եզրակացության ընդունմամբ՝ **պաշտոն զբաղեցնող անձի կողմի**ց (...) անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության մասին:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **պաշտոն զբաղեցնող անձի կողմից** անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը և այդ առնչությամբ վարույթի բոլոր փաստաթղթերը, նյութերը եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում են **պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու (քննելու) իրավասություն ունեցող մարմիններ:**

Վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունից հետևում է, որ **անհամատեղելիության պահանջների** առերևույթ խախտման հիմքով հարուցվող վարույթում վարչական մարմինը պարտավոր է գործով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումն իրականացնել **հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից օրենքով սահմանված պահանջների առերևույթ խախտման** հաստատման կամ հերքման համար անհրաժեշտ պարզման ենթակա հանգամանքների կապակցությամբ, արդյունքում լուծել հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործը՝ հաստատելով հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից խախտման առկայության կամ բացակայության փաստը:

Սույն վարույթի շրջանակներում պարզված փաստական հանգամանքների և վերոնշյալ իրավական նորմերի պահանջների վերլուծության համադրմամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Արմեն Չարչյանի՝ որպես պատգամավորի լիազորությունները **2023 թվականի հոկտեմբերի 30-ից դադարեցված լինելու հանգամանքով** պայմանավորված տեղի է ունեցել իրավիճակի փոփոխություն, որով պայմանավորված վերացել է Հանձնաժողովի կողմից վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը, մասնավորապես, հետևյալ պատճառաբանությամբ.

Ազգային ժողովի պատգամավորն ունի պետական իշխանության օրենսդիր, ներկայացուցչական մարմնի անդամի սահմանադրաիրավական կարգավիճակ, ինչն անհամատեղելի է գործունեության որոշակի տեսակների հետ: Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար օրենսդրությամբ սահմանված որոշակի արգելքների ու սահմանափակումների հիմնական նպատակը ***կոռուպցիայի կանխարգելումն է, այդ թվում՝ շահերի հնարավոր բախման իրավիճակների բացառումը:***

Օրենսդրորեն նախանշված անհամատեղելիության պահանջների պահպանման նպատակին է ուղղված նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումը, համաձայն որի՝ պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը և այդ առնչությամբ վարույթի բոլոր փաստաթղթերը, նյութերը եզրակացությունն ընդունելու պահից եռօրյա ժամկետում ուղարկվում են պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հիմքով նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննարկելու (քննելու) իրավասություն ունեցող մարմիններ:

Այսինքն, օրենսդրի կողմից հետապնդվող նպատակը կոռուպցիայի կանխարգելումն է, այդ թվում՝ շահերի հնարավոր բախման իրավիճակի բացառումը, **պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունները դադարեցնելու միջոցով:**

Նշված իրավանորմերի բովանդակային վերլուծությունից պարզ է դառնում, որ Օրենսդիրը նախատեսել է անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության մասին եզրակացության կայացման պահին անձի **կողմից հանրային պաշտոն զբաղեցնելու էական հանգամանքը**, ինչը տվյալ դեպքում բացակայում է՝ պայմանավորված Արմեն Չարչյանի կողմից պատգամավորի պաշտոնից

հրաժարական տալու, և պատգամավորի լիազորությունները դադարեցվելու հանգամանքով:

Միաժամանակ, նշված հանգամանքների համատեքստում Հանձնաժողովին վերապահվել է նաև պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման մասին եզրակացությունը նրա լիազորությունները դադարեցնելու հարցը քննելու իրավասություն ունեցող մարմիններին ուղարկելու լիազորությունը որի արդյունքում իրավասու մարմինները քննարկում են պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների դադարեցման հարցը, ինչն իր հերթին ենթադրում է, որ օրենսդիրը պաշտոն զբաղեցնող անձի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման հետևանքների վերացումը պայմանավորել է բացառապես պաշտոն զբաղեցնող անձի լիազորությունների դադարեցմամբ:

Վերոշարադրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով Հանձնաժողովի կողմից անհամատեղելիության պահանջների խախտման առկայության կամ բացակայության եզրակացության ընդունման անհրաժեշտությունը վերացել է:պելնելով ամբողջ վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետով և նույն հոդվածի 3-րդ մասով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովը, գնահատելով գործում առկա ապացույցները, բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ՝

ՈՐՈՇԵՑ

1. Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Չարչյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման վերաբերյալ 2023 թվականի մարտի 13-ին հարուցված թիվ 01/2023 վարույթը կարճել:
2. Սույն որոշումը եռօրյա ժամկետում ուղարկել Արմեն Չարչյանին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ**